ԱՐՏԱՇԵՍ Ա-Ի ԿՈՂՄԻՑ ԿԱՍՊԻԱՆԵ-ՓԱՅՏԱԿԱՐԱՆ ՄԱՐԶԻ «ՆՎԱՃՄԱՆ» ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋ
(ըստ Մովսես Խորենացու տվյալների)

Հ. Ս. ՍՎԱՋՅԱՆ

Մովսես Խորենացին հայ այն պատմիչներից է, որոնք որքան հին, նույնքան էլ նոր են մնում ուսումնասիրողների համար։ Ամեն անգամ թերթելով նրա նշանավոր «Պատմութիւն հայոցը», ուսումնասիրողն արդեն ծանոթ տեղեկություններում այնպիսի երանգներ է նկատում, որոնք բոլորովին նոր լույս են սփռում վաղուց հայտնի և, թվում է, ընդմիշտ լուծված հարցերի վրա։ Այդպիսիներից է Կասպիանե-Փայտակարան մարզի քաղաքական կարգավիճակի հարցը մ. թ. ա. II դարում, որ կապված է հայոց թագավոր Արտաշես Ա-ի (189—160) այսպես կոչված նվաճումների հետ։ Այդ «նվաճումների» և դրանց հետ առնչվող խնդրո առարկա մարզի մասին հաղորդում են հույն աշխարհագետ Ստրաբոնը և Մովսես Խորենացին։ Ըստ Ստրաբոնի հաղորդման, «Հայաստանը առաջ եղել է փոքր և մեծացել Արտաքսիասի և Զարիադրեսի պատերազմներով։ ...Սրանք միասին ընդարձակեցին իրենց երկրների սահմանները, գրավելով շրջակա ժողովուրդների մարզերից մի մասը և հատկապես մարերից նրանք խլեցին Կասպիանեն, Փավնիտիսը և Բասորոպեդան, իբերներից՝ Պարիադրեսի նախալեռները, Խորզենեն և Գոգարենեն, որը գտնվում է Կուր գետի մյուս կողմում, խալյուբներից և մոսինոյկներից՝ Կարենիտիսը և Քսերքսենեն, որոնք սահմանակից են Փոքր Հայքին կամ հանդիսանում են նրա մասերը, կատառներից՝ Ակիլիսենեն և Անտիտավրոսի շուրջը գտնվող երկիրը, ասորիներից՝ Տամորիտիսը»[1]։

Ստրաբոնի այս հաղորդումն անվերապահորեն ընդունվել է ուսումնասիրողների կողմից և լայն տարածում ստացել։ Ավելին. հիմք ընդունելով Ստրաբոնի մի ուրիշ հաղորդում այն մասին, որ «Կասպիանե» անունով մի մարզ է պատկանում աղվանցիների երկրին[2], նրանք, և առանձնապես ադրբեջանցի ուսումնասիրողները, շտապել են այդ համանուն երկրամասերը նույնացնել, Կասպիանե-Փայտակարանը հայտարարել աղվանական և անել հակապատմական այնպիսի եզրակացություն, թե Աղվանքը մ. թ. ա. II դ. ենթարկվել է Մեծ Հայքի զավթողական քաղաքականությանը և խնդրո առարկա մարզն Աղվանքից խլվել ու Հայաստանին է միացվել[3]։

---

[1] Страбон, География, пер., статья и комментарии Г. А. Стратановского, Л., 1964, XI, XIV, 5; *Հայ ժողովրդի պատմության քրեստոմատիա, Երևան, 1981, էջ 196։*

[2] Страбон, XI, IV, 5.

[3] К. В. Тревер, Очерки по истории и культуре Кавказской Албании, IV в. до н. э.—VII в. н. э., М.—Л., 1959, с. 44; Ф. Мамедова, Политическая история и историческая география Кавказской Албании, Баку, 1986, с. 118, 145, 146. *Մարդոնի այս հաղորդման ազդեցության տակ Արտաշեսին վերագրվել են նույնիսկ այնպիսի մարզերի նվաճումներ, որոնց մասին նրանում ակնարկ անգամ չկա։ Այսպես, օրինակ, Կ. Տրեվերը, վկայակոչելով Ստրաբոնի վերոբերյալ հաղորդումը, գրում է, թե Արտաշեսն Աղվանքից խլել ու Հայաստանին է միացրել Շակաշենը, Ուտիքն ու Արցախը, որտեղ ապրում էին սակերը, ուտիներն ու գարգար-ալբանացիները, որոնք, նրա կարծիքով, այդ ժամանակ մասնատված լինելով, իբր, չէին կարողացել խոչընդոտել իրենց հողերի նվաճմանը (К. В. Тревер, նշվ. աշխ., էջ 58)։ Զարգացնելով իր այս միտքը, նա այնուհետև գրում է, որ հիշյալ ցեղերը Հայոց կազմում մնում են մինչև մ. թ. 4-րդ դարը և նոր միայն վերամիավորվում Աղվանքի հետ (նույն տեղում, էջ 58, ծան. 8)։*

Ստրաբոնի հաղորդման այսպիսի սխալ ու կամայական մեկնաբանությունը, սակայն, հիմնովին ժխտվում է ինչպես նրա, այնպես էլ Արտաշիսի քաղաքական գործունեության մասին պատմող Մ. Խորենացու տվյալներով։

Ըստ Ստրաբոնի, «Կասպիանեն» իբրև թե նվաճվել է մարերից, այսինքն Մարաստանից, կամ, որ ավելի ճիշտ է այն ժամանակների համար, Ատրպատականից, ինչը նշանակում է, որ եթե, այնուամենայնիվ, եղել է ինչ-որ նվաճում, ապա դա կատարվել է համենայն դեպս ոչ Աղվանքից։ Հաջորդը. ինչպես երևում է նշված մարզերի «Կասպիանե» անվանումից, դրանք «կասպ», «կասպեր» անունը կրող ցեղի կամ ցեղերի բնակության վայրեր են։ «Կասպերը» Կասպից ծովի արևմտյան ափին ապրում էին դեռևս հնագույն ժամանակներից։ Նրանց ցեղային անվանումը՝ «կասպ», սկզբնական շրջանում ունեցել է ընդհանուր, հավաքական իմաստ։ Հետագայում, ցեղերի տարբերակման ժամանակ, այդ ցեղանունը պահպանվել է Կասպից ծովի արևմտյան ափագծի երկարությամբ տարբեր տեղերում բնակություն հաստատած ցեղերի մեջ։ Եվ նրանց բնակատեղիների մասին անտիկ (Ստրաբոն, Պոմպոնիոս Մելա, Դիոնիսիոս և այլք) ու հայ (Ագաթանգեղոս, Խորենացի, Շիրակացի, Կաղանկատվացի և ուրիշներ) հեղինակների հաղորդումների քննությունը բերում է այն համոզման, որ աղբյուրներում որպես աղվանական մարզ հիշատակվող «Կասպիանեն» և կարծեցյալ նվաճման ենթարկված «Կասպիանե-Փայտակարանը», բացի անվանական սոսկական նմանությունից ուրիշ և ոչ մի կապ չունեն միմյանց հետ։ Դրանցից առաջինը գտնվում էր Կուրից հյուսիս՝ Կովկասյան լեռնաշղթայի ծովամերձ փեշերին և Աղվանից պետության ձևավորման ժամանակ կազմեց նրա երկրամասերից մեկը, իսկ մյուսը՝ հեռու հարավում Հայաստանի սահմաններում[4], ինչը դարձյալ թույլ չի տալիս որևէ ենթադրություն անել Աղվանքից կատարված նվաճման, այն էլ ոչ թե սահմանամերձ, այլ երկրի խորքում գտնվող առանձին մարզի նվաճման մասին։ Եվ, վերջապես, մ. թ. ա. II դ. կազմավորված, որոշակի սահմաններով Աղվանից պետություն դեռ չկար, ուստի և անհնար էր անձև աշխարհագրական միավորից որոշակի տարածք նվաճել։

Այսպիսով, միանգամայն սխալ է ու հակագիտական աշխարհագրորեն, վարչական կացությամբ ու քաղաքական պատմությամբ միմյանցից բոլորովին տարբեր երկրամասերը նույնացնել և ապա դրանից պատեհապաշտ եզրակացություններ անել։

Իսկ այժմ դառնանք բուն «նվաճման» խնդրին։ Օգտվելով Հանիի Ողյումպ քուրմի «մեհենական պատմություններից»[5], որոնք սնունդ են առել հայկական միջավայրում ստեղծված այն նույն ակունքներից ինչ և Ստրաբոնի օգտագործած աղբյուրը[6], Խորենացին Արտաշեսի քաղաքական գործունեության մեջ Կասպիանե-Փայտակարան մարզին հատկացնում է ոչ թե նվաճված, այլ վերանվաճված մարզի կարգավիճակ։ Ըստ նրա, մահանում է Պարթևքի (Խորենացու մոտ՝ Պարսից) թագավորը։ Սրան, ոչ առանց հայոց Արտաշես թագավորի օգնության, հաջորդում է որդին (Խորենացին սրան ևս Արտաշես է անվանում), որին չեն ուզում ենթարկվել Պատիժսհար կամ Գիլան գավառի ու ծովեզերքի բնակիչները։ Սրանից օգտվելով՝ հայոց արքայի դեմ ապստամբում է և Կասբից երկիրը ու փորձում դուրս դալ նրա ենթակայությունից։ Սակայն Արտաշեսը Կասբից երկիր կատարած մի արշավանքով կարողանում է արագորեն ճնշել ապստամբությունը և մարզը կրկին հնազանդեցնել իրեն։ «Յետ մեռանելոյ վերջնոյ Արշակայ թագաւորի Պարսից,—

---

4 Մանրամասն տե՛ս Հ. Ս. Սվազյան, Կասպերի ցեղային միություններն Աքեմենյան Պարսկաստանի տիրապետության ժամանակաշրջանում (մ. թ. ա. VI դ.—մ. թ. ա. IV դ.) (ՀԽՍՀ ԳԱ Լրաբեր հաս. գիտ., 1983, № 6, էջ 81—89)։

5 Մովսիսի Խորենացւոյ Պատմութիւն Հայոց, Երևան, 1981, գիրք Բ, գլ. ԽԲ։

6 Գ. Խ. Սարգսյան, Հելլենիստական դարաշրջանի Հայաստանը և Մովսես Խորենացին, Երևան, 1966, էջ 172, 235—236։

գրում է պատմահայրը,—թագաւորեցուցանէ մերս Արտաշէս զհամանուն իւր զԱրտաշէս որդի նորին ի վերայ Պարսից աշխարհին։ Եւ ոչ կամեցան հնազանդել նմա բնակիչք լերինն, որ անուանեալ կոչի յիւրեանց լեզուն Պատիժահար դաւառ, որ է Գեղմանց լեառն, և ծովեզերեայք, և այսր ևս քան զնոսա. նա և Կասբից երկիրն յայն սակս ապստամբեն ի մերոյ արքայէն։ Վասն որոյ առաքէ ի վերայ նոցա Արտաշէս զՍմբատ ամենայն զօրօքն Հայոց, ինքն արքայ յուղարկ երթալով աւուրս եօթն։ Իսկ Սմբատայ երթեալ հնազանդէ զամենեսեան. բայց զերկիրն Կասբից աւերեալ առաւել քան զԱրտազեան դերի ածէ ի Հայս. ընդ որս և զՋարդմանոս անուն թագաւոր նոցին»[7]։

Տարակույս չի կարող լինել, որ այստեղ հիշատակված Կասբից երկիրը Ստրաբոնի Կասպիանեն է։ Դա է ցույց տալիս այն աշխարհագրական դիրքը, որ գրավում են նրանք թե՛ Ստրաբոնի և թե Խորենացու հաղորդումներում։ Առաջինը խնդրո առարկա երկրամասը տեղադրում է Փավլիտիսի ու Բասորոպեդայի (Վասպուրականի Պարսպատունիք գավառի) հետ, Ատրպատականին սահմանամերձ գոտում, իսկ վերջինս՝ Գիլան գավառի և ուրիշ այլ ծովեզերյա բնակիչների հարևանությամբ, այլ խոսքով, դարձյալ Ատրպատականի սահմանակցությամբ[8]։ Ուրեմն, Խորենացու հաղորդումը վերաբերում է այն նույն Կասպիանե երկրին, որին Ստրաբոնը ներկայացնում է որպես Արտաշեսի կողմից նվաճված, իսկ Խորենացին՝ ի տարբերություն նրա, վերանվաճված երկիր։

Մարզի նվաճման մասին Խորենացու հաղորդումը չի վրիպել ուսումնասիրողների ուշադրությունից։ Նրանք դրանում իրավացիորեն տեսել են մարզի վերանվաճման փաստ։ Սակայն, դրանով հանդերձ, Արտաշեսի կարծեցյալ նվաճումների մասին Ստրաբոնի տիրապետող դարձած հաղորդման ներգործության տակ կարծել են, թե վերանվաճմանը նախորդել է նվաճումը[9]։ Նման կարծիքն անհավանական է, որովհետև այդ դեպքում Արտաշեսը դեպի արևվելք՝ Կասպիանե երկիր պետք է կատարած լիներ առնվազն երկու արշավանք. նախ նվաճելու, ապա և վերանվաճելու համար։ Բայց Խորենացին, որն այնքան մանրամասն է նկարագրում Արտաշեսի կյանքն ու գործունեությունը, դրանց նվիրելով ամբողջ 25 գլուխ (Բ գրքի 37—61 գլուխները), խոսում է դեպի արևելք՝ նրա միայն մեկ, այն էլ մարզի ապստամբելու առիթով հարուցված արշավանքի մասին։ Համոզված ենք, որ եթե դրան նախորդած լիներ մի ուրիշ արշավանք, ապա Պատմահայրը, անկասկած, կխոսեր նաև դրա մասին։ Բայց քանի որ նա (և ոչ էլ մի ուրիշ պատմիչ) դա չի անում, ապա մնում է միանգամայն հիմնավոր կարծել, որ դա մարզի ապստամբության պատճառով հրահրված հայոց թագավորի միակ ռազմական երթն էր, և Կասբ-Կասպիանե-Փայտակարան նահանգն Արտաշեսի «նվաճումներից» էլ առաջ եղել է հայոց մարզերից մեկը։ Որ մարզն Արտաշեսի թագավոր դառնալուց շատ ավելի շուտ էր դտնվում Հայոց պետության կազմում, հաստատվում է դարձյալ պատմահոր տվյալներով և, առաջին հերթին, Երվանդ-Արտաշիսյան զրույցով։ Ըստ այդ զրույցի, ոեռևս սելևկյան զորավար (ստրատեգոս) Արտաշեսը մ. թ. ա. 202—201 թթ.[10] իշխանության համար կռվի է դուրս գալիս

---

7 Մովսես Խորենացի, Բ. գլ. ԾԳ։

8 Հիշյալ երկրների նույնության մասին տե՛ս նաև Ս. Տ. Երեմյան, Հայաստանը ըստ «Աշխարհացույց»-ի, Երևան, 1963, էջ 67, Գ. Տիրացյան, Մովսես Խորենացու «Հայոց պատմության» և Ստրաբոնի «Աշխարհագրության» մի քանի տվյալներ Հայաստանի ն. մ. թ. III—II դարերի պատմության մասին (Բանբեր մատենադարանի, № 6, Երևան, 1962, էջ 8)։

9 Գ. Տիրացյան, Մովսես Խորենացու «Հայոց պատմության» և Ստրաբոնի «Աշխարհագրության» մի քանի տվյալներ..., էջ 9, Հայ ժողովրդի պատմություն, հ. 1, Երևան, 1971, էջ 531։

10 Գ. Խ. Սարգսյան, Անտիոքոս Գ Սելևկյանը և հայկական պետությունները (Բանբեր Երևանի համալսարանի, 1969, № 1, էջ 50)։

այդ ժամանակ Հայաստանում թագավորող Երվանդունի հարստության վերջին ներկայացուցչի՝ Երվանդ-Օրոնտեսի դեմ և այդ կռիվը տեղի է ունենում Ուտիքում։ «Լուր հասանէ առ Երուանդ յՈւտեացւոց գաւառին, եթէ դումարեաց արքայն Պարսից (Սելևկյան—Հ. Ս.) զօրս բազումս ի ձեռն Սմբատայ, զի ի վերայ քո խաղացեալ ածցէ զմանուկն Արտաշէս ի թագաւորութիւն իւր»[11], «իսկ Սմբատ հանդերձ մանկամբն Արտաշիսիւ աճապարէր հասանել ի սահմանս Ուտէացւոց։ Ընդ առաջ նորա ելին զօրք այնր կողմանե, նա և նախարարքն զորս եթող Երուանդ»[12]։ Արդեն իսկ այն հանգամանքը, որ նրանց ընդհարումից առաջ այնտեղ էին գտնվում ինքը՝ հայոց թագավորն ու շատ հայ նախարարներ և բուն ընդհարման փաստն Ուտիքում, թույլ են տալիս հաստատապես ասելու, որ վերջինս դեռևս Երվանդունի թագավորների ժամանակներից հայոց մարզերից մեկն էր։ Իսկ եթե Ուտիքը հայկական էր, ապա կասկած չի կարող լինել և այն մասին, որ նրանից զգալիորեն հարավ-արևելք ընկած Կասպիանեն ևս կլիներ Երվանդական Հայաստանի անբաժանելի մասը[13]։

Ախոյանների միջև կռիվն ավարտվում է Արտաշեսի հաղթանակով, որի հետևանքով Երվանդունիների պետության ողջ տարածքը՝ Եփրատ գետից մինչև Կասպից ծով և Կուր գետից մինչև Հայկական լեռներ ու Տուռ-Աբդին լեռնաշղթա ձգվող իր պատմական սահմաններով[14], անցնում է նրա տիրապետության տակ։ Դա ևս վկայում է Խորենացին, գրելով, որ Սմբատը Արտաշեսին «թագաւորեցուցանէ ի վերայ ամենայն երկրից Հայոց»[15]։

Ուրեմն, Կասպիանե-Փայտակարանը Արտաշեսին է անցել ոչ թե ինչ-որ նվաճումների միջոցով, ինչպես մինչև այժմ ենթադրվել է, այլ որպես ժառանգություն՝ հաղթողի իրավունքով[16]։ Ասվածի հետևությամբ, նման ճակատագիր կարելի է մակաբերել նաև Բասորոպեդայի և Փավնիտիսի համար։

Լինելով հայոց նահանգներից մեկը, Կասպիանեն, սակայն, տարված էր կենտրոնախույս, անջատողական տրամադրություններով և, օգտվելով հարմար առիթից, ապստամբել է ու փորձել ինքնուրույն կյանք վարել։ Մարզի այդ տրամադրությունը շատ լավ երևում է նաև նրա հանդեպ Արտաշեսի դրսևորած վերաբերմունքից։ Այն դեպքում, երբ Պարթևաց թագավորին անհնազանդ Պատիժահար գավառն ու մյուսներին սոսկ հպատակության բերելով հայոց թագավորը բավարարվում է իր դրածոյի քաղաքական իշխանությունը վերականգնելով, ապա Կասբից երկրում ապստամբությունը ճնշելուց հետո այն ավարառության է ենթարկում և մեծ չափերի գերեվարություններ կատարում։ Գերեվարվածների մեջ էր նաև նրանց թագավոր կոչված Զարդմանոսը, որը, ամենայն հավանականությամբ, խռովության կազմակերպիչն էր։ Արքաներն այսպիսի քաղաքականություն էին վարում ապստամբ երկրամասերի նկատմամբ՝ նրանց կենտրոնախույս ձգտումներին վերջ տալու և հնազանդության մեջ պահելու նպատակով։ Մարզի կենտրոնախույս այս տրամադրության արտահայտությունն ու նրա ճնշումն է, որ Ստրաբոնը ներկայացրել է որպես նվաճում։ Մինչդեռ Խորենացին, որն, ինչպես ասել ենք, Ստրաբոնի հետ ունեցել է մի ընդհանուր աղբյուր, առավել հարազատ է մնացել վերջինիս և պատմական իրադարձությունները շարադրել է իրենց բնականոն ընթացքի մեջ, դրանով հնարավորություն ընձեռելով լիովին բա-

---

11 Մովսես Խորենացի, Բ, գլ. ԽԴ։

12 Նույն տեղում, գլ. ԽԵ։

13 Նույն տրամաբանությամբ հայկական մարզ էր նաև դրանց հարևան նահանգը՝ Արցախը։

14 Գ. Տիրացյան, Երվանդյան Հայաստանի տարածքը (մ. թ. ա. VI դար) (Պատմաբանասիրական հանդես, 1980, № 4, էջ 84—95), Նույնի՝ Երվանդյան Հայաստանի տարածքը (մ. թ. ա. VI դ. վերջ—մ. թ. ա. III դ. վերջ), նույն տեղում, 1981, № 2, էջ 68—84), Հայ ժողովրդի պատմություն, հ. 1, էջ 508։

15 Մովսես Խորենացի, Բ, գլ. ԽԷ։

16 Նմանապես և Ուտիքն ու Արցախը, ասել է թե ընդհանրապես Կուրի ողջ աջափնյակը։

ցառելու մարզն Արտաշեսի կողմից երբևիցե նվաճված լինելու գաղափարը։

Այսպիսով, Խորենացու հաղորդումները ստուգապես վկայում են, որ Կասպիանե-Փայտակարանը եղել է հայոց հինավուրց նահանգներից մեկը և հաստատում, որ այն որպես այդպիսին չէր կարող նվաճված լինել Արտաշեսի կողմից, քանի որ անհեթեթ է կարծել, թե հայոց թագավորը նվաճումներ էր կատարում իր իսկ սեփական երկրում։ Հարցին այլ կերպ մոտեցող ուսումնասիրողները ոչ միայն մեղանչում են պատմական ճշմարտության առջև, այլև աղավաղում ինչպես Մեծ Հայքի, այնպես էլ Աղվանքի իրական պատմությունը։

К ВОПРОСУ О «ЗАВОЕВАНИИ» АРТАШЕСОМ I ОБЛАСТИ КАСПИАНЕ-ПАЙТАКАРАН
(По данным Мовсеса Хоренаци)

Г. С. СВАЗЯН

Резюме

Согласно Страбону, армянский царь Арташес I (189—160) завоевал и присоединил к Великой Армении области соседствующих стран. В числе их он упоминает и область Каспиане-Пайтакаран, якобы отнятую у мидийцев.

Такое мнение нашло свое позитивное отражение в историографии. Однако сведениями самого же Страбона доказывается, что область Каспиане, находясь на территории будущего Алуанка, кроме как именной схожести, никакой связи не имеет с областью Каспиане-Пайтакаран, расположенной далеко от нее на юге в пределах Великой Армении и, тем самым, опровергается предвзятое мнение о том, что она была завоевана у алуанцев.

Хоренаци вообще отрицает факт ее завоевания. Им подтверждается, что область Каспиане являлась исконно армянской и перешла во владение Арташеса по праву победителя в борьбе за власть с представителем Ервандидской династии Ервандом-Оронтем еще тогда, когда Арташес был селевкидским стратигом, т. е. задолго до восшествия его на царский трон Армении.

Сообщения Хоренаци свидетельствуют также, что будучи армянской, область Каспиане была настроена сепаратистически и поход Арташеса на нее был вызван восстанием области. Именно этот поход и факт подавления восстания рассмотрены Страбоном как завоевание области.